ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական

խորհրդի 2018թ. օգոստոսի 31-ի նիստի

Ներկա էին գիտական խորհրդի 68 անդամներից 62-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱՀ-ի որոշ ֆակուլտետների և ամբիոնների վերակազմավորման մասին: Հիմք ընդունել ռեկտորատի 28.08.2018թ. նիստում կայացած որոշումը:

Վ.Ուռուտյան

2. 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական գործընթացի արդյունքներն ու խնդիրները:

Ս.Դավեյան

3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ ՀԱԱՀ ռեկտորի պաշտոնակատար Վարդան Ուռուտյանը, որոշունելով ներկաներին, շնորհավորեց նոր ուսումնական տարվա առթիվ և մաղթեց հաջողություններ համատեղ աշխատանքում:

Նիստի օրակարգից դուրս Վ.Ուռուտյանը պարգևատրեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Ոսկե հուշամեդալով» ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀԳ ազգային ակադեմիայի ակադեմիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արշալույս Պողոսի Թարվերդյանին գիտության և կրթության ոլորտում ներդրած ծանրակշիռ ավանդի արգասաբեր գործունեության համար:

Նույն նիստում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Շնորհակալագրով» պարգևատրվեց գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, ՀԱԱՀ վաստակավոր պրոֆեսոր Յուրի Գիգոլի Մարմարյանը երկարամյա գիտամանկավարժական գործունեության, կրթության և գիտության ոլորտում ներդրած ծանրակշիռ ավանդի համար:

Դրանից հետո տեղի ունեցավ օրակարգային հարցերի քննարկում:

Վ.Ուռուտյանը նշեց, որ համալսարանում ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու, ամբիոնների ֆինանսական կառավարումը բարելավելու նպատակով պետք է վստահ գնալ փոփոխություններին ընդառաջ, որպեսզի ունենալ նոր ձեռքբերումներ և շրջանավարտները հաջողության հասնեն:

Ռեկտորի պաշտոնակատարը գիտական խորհրդի քննարկմանը ներկայացրեց «ՀԱԱՀ-ի որոշ ֆակուլտետների և ամբիոնների վերա-կազմավորման» հարցը, որը քննարկվել է ռեկտորատի 28.08.2018թ. նիստում և արժանացել է հավանության: Կայացված որոշումը երաշխավորվել է ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը, ապա ներկայացնել հոգաբարձուների խորհրդին համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Առաջարկվեց Տնտեսագիտական և Ագրոբիզների և շուկայաբանության ֆակուլտետները վերակազմավորել միավորման միջոցով և ստեղծել «Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ»:

Առաջարկվեց նորաստեղծ ֆակուլտետներոի կազմում հաստատել հետևյալ ամբիոնները՝

- Ագրոբիզնեսի կառավարման.
- Տվյալագիտության՝ միավորելով «Ինֆորմատիկայի և մաթեմատիկական մեթոդների» և «Վիճակագրության և բիոմետրիայի» ամբիոնները.
- Ֆինանսների և հաշվապահության.
- Ագրարային էկոնոմիկայի՝ միավորելով «Ագրոպարենային համակարգի էկոնոմիկայի», «Տնտեսագիտության տեսության» և «Ապրանքագիտության և մարքեթինգի» ամբիոնները.
- Ագրարային քաղաքականության և խորհրդատվության.
- Հասարակական գիտությունների՝ միավորելով «Հայոց պատմության և փիլիսոփայության» և «Իրավագիտության և քաղաքագիտության» ամբիոնները:

Որոշեցին՝ Հավանություն տալ առաջարկված կառուցվածքային փոփոխություններին, հաստատել (միաձայն) «Տնտեսագիտական» և «Ագրոբիզների և շուկայաբանության» ֆակուլտետների միավորման արդյունքում ստեղծված «Ագրոբիզնեսի և տնտեսագիտության» ֆակուլտետը և այդ ֆակուլտետի հետևյալ ամբիոնները՝

- Ագրոբիզնեսի կառավարման.
- Տվյալագիտության.
- Ֆինանսների և հաշվապահության.
- Ագրարային էկոնոմիկայի.
- Ագրարային քաղաքականության և խորհրդատվության.
- Հասարակական գիտությունների:

Լսեցին՝ Առաջարկվեց «Գյուղմեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի» և «Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի» ֆակուլտետները միավորելով ստեղծել «Ագրարային ճարտարագիտության» ֆակուլտետ:

Եղավ հանձնարարական երկու վերակազմավորվող ֆակուլտետների դեկաններին և ամբիոնների վարիչներին քննարկել և տալ առաջարկություններ ամբիոնների միավորման հարցում:

Ագրոնոմիական ֆակուլտետի կառուցվածքում ստեղծել հետրյալ ամբիոնները՝

- Ագրոէկոլոգիայի և անտառագիտության.
- Հայոց և օտար լեզուների:

Որոշեցին՝ Հաստատել վերընշված կառուցվածքային փոփոխությունները՝

- Ստեղծել «Ագրոնոմիական ճարտարագիտության » ֆակուլտետ.
- Ագրոէկոլոգիայի և անտառագիտության ամբիոն.
- Հայոց և օտար լեզուների ամբիոն:

Լսեցին՝ Ա.Թարվերդյանը առաջարկեց կասեցնել 06.07.2018թ. № 278/Լ հրամանը (27.06.2018թ., արձանագրություն № 11) կապված «Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի» թերապիայի,

վիրաբուժության և ծննդագիտության ամբիոնի տարանջատման հետ և ամբիոնը թողնել անփոփոխ:

Ֆակուլտետի դեկան Ա.Վարդանյանը առաջարկեց հրամանը թողնել ուժի մեջ (ամբիոնը տարանջատել և ստեղծել 2 ամբիոն):

Եղավ առաջարկություն (պոեկտոր Ռ.Մակարյան) հրամանը կասեցնել և հարցը ուսումնասիրել:

Որոշեցին՝ Ա.Թարվերդյանի կողմից արված առաջարկությունը կասեցնել 06.07.2018թ. № 278/Լ հրամանը դրվեց քվեարկության: Բաց քվեարկության արդյունքներն են՝ կողմ-60, դեմ-1, ձեռնպ.-1.

Լսեցին՝ Պ-ն Վ.Ուռուտյանը նշեց, որ ամբիոնների միավորման գործընթացը շարունակական է լինելու, քանի որ պետք է վերանայվեն և բեռնաթափվեն ուսումնական պլանները և այս առումով չի բացառվում որ ևս մեկ անգամ վերադարնան ամբիոնների միավորման և վերակազմավորման հարցին:

Լսեցին՝ «Պարենամթերքների տեխնոլոգիաների» ֆակուլտետում Վ.Ուռուտյանը առաջարկեց սննդի արդյունաբերության սարքավորումների, կաշվի և մորթու տեխնոլոգիայի ամբիոնը վերանվանել սննդի արդյունաբերության սարքավորումների ամբիոն, իսկ կաշվի և մորթու առարկաները տեղափոխել անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակման տեխնոլոգիայի ամբիոն:

Ա.Բեգլարյանը (ամբիոնի վարիչ) առաջարկեց ամբիոնը անվանել սննդի արդյունաբերության սարքավորումների և փաթեթավորման տեխնոլոգիայի:

Եղավ առաջարկություն ամբիոնի անվանումը քննարկել «Ագրարային ճարտարագիտության» ֆակուլտետի ամբիոնների միավորման և կազմավորման ժամանակ:

Որոշեցին՝ Առաջարկությունը դրվեց քվեարկությանը և ընդունվեց միաձայն:

Լսեցին՝ Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի պաշտոնակատար Ս.Դավեյանի հաղորդումը «2017-2018 ուսումնական տարվա ուսումնական գործընթացի արդյունքներն ու խնդիրները» հարցը:

Զեկուցողը արձանագրեց, որ համալսարանում վերջին տարիներին մեծ ծավալի աշխատանքներ են տարվում կրթության որակի ապահովման , եվրոպական չափանիշների արմատավորման, կրթական ծրագրերի իրականացման համար, իրականացվող գործընթացներում ուսանողների դերի բարձրացման ուղղություններով:

Նշվեց, որ համալսարանում աշխատանքներ են տարվում համակարգչային տեխնիկայի թարմացման ու համալրման, համակարգչային լսարանային ցանցի ընդլայնման, էլեկտրոնային ուսուցման համակարգի զարգացման, հեռավոր ուսուցման կազմակերպման ուղղություններով:

Արտահայտվեցին՝ Ա.Ոսկանյանը, Հ.Ջավադյանը, Դ.Պետրոսյանը, Օ.Քամալյանը:

Ռեկտորի պաշտոնակատար Վ.Ուռուտյանը ներկայացրեց մի շարք հարցեր, որոնք վերաբերվում էին բուհում առաջիկայում սպասվող բարեփոխումներին: Մասնավորապես նշեց, որ այսուհետ կբացառվեն թելադրելու եղանակով դասախոսությունների անցկացումը: Դասախոսությունները պետք է մշակվեն նորագույն տեխնոլոգիաների միջոցով, և տեղադրվեն բուհի օնլայն հարթակում: Վերանայվելու են ուսանողների բացակայությունների լրացման կարգը, կրճատվելու են կուրսային աշխատանքների ծավալը, իսկ կիսամյակային քննությունները մոտ ապագայում կհանձնվեն թեստային տարբերակով, որը նախ կկիրառվի հեռակա դեպարտամենտում:

ՀԱԱՀ Ա.Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջում առաջարկվեց վերանայել դասաժամերի տևողությունը, ակադեմիական 80 րոպեից դարձնել 70 րոպե:

Ամբիոններում բազմագործոնային գնահատման համակարգում հաճախումների կշիռը բարձրացնել, բացառել ձեռագիր որևէ ուսումնական աշխատանք ներկայացնելը:

Ուսանողները հարց բարձրացրեցին բուժկետ ունենալու, ջերմատան վերանորոգման, ֆիզկուլտուրայի դասերի անցկացման, համալսարանում ծխելը արգելելու մասին:

Որոշեցին՝ Լսելով և քննարկելով «2017-2018 ուսումնական տարվա ուսումնական գործընթացի արդյունքներն ու խնդիրները» հարցը, գիտական խորհուրդը միաձայն

ո ր ո շ ում է՝

/որոշումը կցվում է/:

Լսեցին՝ Գիտական գծով պրոռեկտոր Հ.Ծպնեցյանի հաղորդումը «Կերահավաքման աշխատանքների մեքենայացման առանձնահատկությունները լեռնային պայմաններում» 372 էջ ծավալով մենագրության մասին (հեղինակներ՝ պրոֆեսորներ Ա.Պ.Թարվերդյան, Ս.Ե.Մարգարյան, Հ.Թ.Հակոբյան):

Որոշեցին՝ Հաշվի առնելով մենագրության վերաբերյալ դրական կարծիքները՝ այն երաշխավորել տպագրության համալսարանի ֆինանսական միջոցների հաշվին, 10-ական օրինակներ տրամադրել գրքի հեղինակներին:

Լսեցին՝ Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հասմիկ Ժիրայրի Տեր-Մովսեսյանի Ե.18.01 «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասմագիտությամբ թեկնածուական ատենախոսությունների ղեկավարելու թույլտվության հարցը:

Որոշեցին՝ Թույլատրել կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հասմիկ Ժիրայրի Տեր-Մովսեսյանին թեկնածուական ատենախոսությունների ղեկավարումը Ե.18.01 «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասմագիտությամբ:

Լսեցին՝ Ռուբեն Պերճի Գաթրջանի թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

Որոշեցին՝ Ռուբեն Պերճի Գաթրջանի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ, «ՀՀ ջերմոցային տնտեսություններում այլընտրանքային էներգիայի կիրառման արդյունավետության գնահատման հիմնահարցերը» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Լսեցին՝ Լուսինե Սարգսի Ավագյանի թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

Որոշեցին՝ Լուսինե Սարգսի Ավագյանի ԺՁ.00.01 «Անասնաբուծություն» մասնագիտությամբ, «Հանրապետությունում իրացվող կաթի և կաթնամթերքի անասնաբուժական սանիտարական փորձաքննությունը» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Գիտխորհրդի նախագահ Վ.Ուռուտյան

Գիտքարտուղար Դ.Ս.Բալասանյան